Luys Lnyu®

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ – 2020

Հաշվետվություն Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից հրապարակված՝ Համաշխարհային գենդերային անհավասարության զեկույցի (2021թ.) հիման վրա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 1

1. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 3

2. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ 7

2.1. Համաշխարհային տենդենցներն ու արդյունքները 7

2.2. ԿՈՎԻԴ-19-ի ազդեցությունը գենդերային անհավասարության վրա 8

2.3. Գենդերային անհավասարությունն աշխարհի տարբեր հատվածներում 9

3. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 10

4. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ 16

ԱՄՓՈՓՈՒՄ 19

ՆԱԽԱԲԱՆ

Սոցիալ-տնտեսական կարևորագույն նշանակության մարտահրավերներից մեկը, որին այսօր բախվել է աշխարհը, կանանց և տղամարդկանց միջև հավասարության (**գենդերային հավասարություն**) հասնելու անհրաժեշտությունն է: Ընդհանրապես, գենդերային հավասարության հիմքում ընկած է սեռերի միջև իրավունքների, պարտականությունների (պատասխանատվությունների) ու հնարավորությունների հավասարությունը:

Պետք է փաստել, որ աշխարհի թերևս բոլոր անկյուններում և տարբեր հասարակական շերտերում (մշակութային, կրոնական, ազգային և այլն) գենդերային անհավասարությունն այս կամ այն տեսքով իր դրսևորումներն ունի: Բազմաթիվ հասարակություններում կանանց և տղամարդկանց միջև տարբերություններն ու անհավասարություններն այժմ էլ արձանագրվում են թե՛ նրանց ստանձնած պատասխանատվությունների և գործառույթների շրջանակներում, թե՛ կրթական, սոցիալական, տնտեսական և այլ ռեսուրներին հասանելիության և դրանց կառավարման հարցերում և թե՛ որոշումների կայացման հնարավորություններում:

Միաժամանակ, պետք է նկատել, որ գենդերային խտրականությունը ոչ միայն վատացնում է աշխարհի բնակչության մի մասի կյանքի որակը, այլև զգալի ռիսկի տակ է դնում երկարաժամկետ աճի և ազգերի բարեկեցության խնդիրը: Այն պետությունները, որոնք ամբողջ պոտենցիալով չեն օգտագործում իրենց մարդկային կապիտալը, երկարաժամկետում կարող են կորցնել իրենց մրցունակությունն ու հզորությունը:

Հաշվի առնելով, որ գենդերային հավասարությունն ունի կարևոր սոցիալական, տնտեսական և բիզնես նշանակություն, ինչպես նաև նշանակալի ազդեցություն պետությունների զարգացման վրա, 2006 թվականից սկսած Համաշխարհային տնտեսական համաժողովը (ՀՏՀ) յուրաքանչյուր տարի թողարկում է «Համաշխարհային գենդերային անհավասարություն» վերտառությամբ զեկույցների շարքը:

Զեկույցներում ներկայացվում է **Համաշխարհային գենդերային անհավասարության ինդեքսը** (**ՀԳԱ ինդեքս**), որը չորս կարևորագույն ուղղություններով (*տնտեսական*, *քաղաքական*, *կրթական* և *առողջական*) գնահատում է գենդերային անհավասարության էվոլյուցիան աշխարհի տարբեր երկրներում, ինչպես նաև արձանագրում է այդ երկրներում, հետևաբար նաև ամբողջ աշխարհում գենդերային անհավասարությունը հաղթահարելու առաջընթացը կամ հետընթացը տարիների ընթացքում:

ՀԳԱ 2021թ. զեկույցը[1] լույս է տեսել այս տարվա մարտ ամսին՝ ԿՈՎԻԴ-19-ի համավարակից մեկ տարի անց և ներկայացնում է գենդերային անհավասարությունն աշխարհում 2020թ. ընթացքում: Այս տարվա զեկույցում ներկայացված են նաև ԿՈՎԻԴ-19-ի ազդեցության ՀՏՀ գնահատումները՝ գենդերային անհավասարության համատեքստում: Զեկույցում ներառվել է 156 երկիր, որոնցից 107-ի մասով ինդեքսը հաշվարկվում է ամեն տարի՝ սկսած 2006-ից: ՀՀ-ն զեկույցներում ներառված է 2007 թվականից, իսկ 3-ի համար (Աֆղանստան, Գայանա և Նիգեր) ՀԳԱ ինդեքսը ներկայացվում է առաջին անգամ:

Զեկույցը հնարավորություն է տալիս գենդերային անհավասարության հարցերի շուրջ վերլուծություններ իրականացնել առանձին պետությունների համար, ինչպես նաև լայն գործիքակազմ է ստեղծում միջազգային և տարածաշրջանային համեմատությունների ու համադրումների համար: Բացի այդ, այն նաև յուրահատուկ ուղեցույց է պետական և մասնավոր հատվածներում կառավարում իրականացնող մարմինների համար՝ գենդերային անհավասարությունը հաղթահարելու ուղղությամբ ճիշտ թիրախավորումներ և արդյունավետ քաղաքականություններ մշակելու համատեքստում:

«Լույս» հիմնադրամի կողմից միջազգային հեղինակավոր կառույցների հրապարակած ինդեքսների, այդ թվում նաև ՀԳԱ ինդեքսի ամենամյա վերլուծությունների շարքը[2] լրացնելով՝ «ՀԳԱ ինդեքս 2020»-ի շրջանակներում կանդրադառնանք ոչ միայն ՀՀ գնահատականներին ու տարածաշրջանային համադրումներին, այլև ԿՈՎԻԴ-19-ի հետևանքով աշխարհում գենդերային անհավասարության հաղթահարման հետ կապված նոր մարտահրավերներին ու ստեղծված խնդիրներին, ինչպես նաև ՀՏՀ-ի կողմից ներկայացված գնահատումներին:

Այսպես, վերլուծության առաջին գլխում հակիրճ տրվել է ՀԳԱ ինդեքսի հիմնական նկարագրությունը և անդրադարձ է կատարվել դրա հաշվարկման մեթոդաբանությանը: Երկրորդ գլխում մեջբերվել են համաշխարհային կտրվածքով «ՀԳԱ ինդեքս - 2020»-ի գնահատականները, այդ թվում՝ նաև գենդերային անհավասարության վրա ԿՈՎԻԴ-19-ի ազդեցության վերաբերյալ: Երրորդ գլխում վերլուծվել է գենդերային անհավասարությունը Հայաստանում 2020 թվականին, իսկ չորրորդ գլխում ներկայացվել են տարածաշրջանային համադրումներն ու Հայաստանի դիրքը ընդհանուր համապատկերում: Դրան հաջորդում է վերլուծության ամփոփումը:

---

[1] Ամբողջական զեկույցը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://bit.ly/3zvTi9Y:

[2] «ՀԳԱ ինդեքս - 2019»-ի վերաբերյալ «Լույս» հիմնադրամի կողմից իրականացված վերլուծությանը կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ https://bit.ly/3hXN1hK:

1. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Համաշխարհային գենդերային անհավասարության ինդեքսն ուսումնասիրում է կանանց և տղամարդկանց միջև անհավասարությունը չորս առանցքային ուղղություններով (ենթաինդեքսներով)՝ ***ա)*** *Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ*, ***բ)*** *Կրթության ձեռքբերում*, ***գ)*** *Առողջություն և կյանքի տևողություն*, ***դ)*** *Քաղաքական մասնակցություն*:

Աղյուսակ 1.1. ՀԳԱ ինդեքսի կառուցվածքը

	Ցուցանիշ
Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ	Իգական և արական սեռերի ներկայացուցիչների աշխատուժի մասնակցության մակարդակների հարաբերակցություն
	Միատեսակ աշխատանքների համար իգական և արական սեռերի ներկայացուցիչների վարձատրությունների հավասարություն (1-7 սանդղակ)
	Իգական և արական սեռերի ներկայացուցիչների վաստակած եկամուտների հարաբերակցություն
	Իգական և արական սեռերի օրենսդիրների, բարձրաստիճան պաշտոնյաների և կառավարիչների թվաքանակի հարաբերակցություն
	Իգական և արական սեռերի մասնագետների և տեխնիկական աշխատողների թվաքանակի հարաբերակցություն
Կրթության ձեռքբերում	Իգական և արական սեռերի ներկայացուցիչների գրագիտության մակարդակների հարաբերակցություն
	Տարրական կրթական համակարգում սովորող իգական և արական սեռերի ներկայացուցիչների թվաքանակի հարաբերակցություն
	Միջնակարգ կրթական համակարգում սովորող իգական և արական սեռերի ներկայացուցիչների թվաքանակի հարաբերակցություն
	Բարձրագույն կրթական համակարգում սովորող իգական և արական սեռերի ներկայացուցիչների թվաքանակի հարաբերակցություն
Առողջություն և կյանքի տևողություն	Իգական և արական սեռերի նորածինների թվաքանակի հարաբերակցություն
	Իգական և արական սեռերի ներկայացուցիչների առողջ կյանքի տևողությունների հարաբերակցություն
Քաղաքական մասնակցություն	Իգական և արական սեռերի պատգամավորների թվաքանակի հարաբերակցություն
	Իգական և արական սեռերի նախարարների թվաքանակի հարաբերակցություն
	Պետության իգական և արական սեռերի ղեկավարների իշխանության տարիների հարաբերակցություն (վերջին 50 տարիների կտրվածքով)

Աղյուսակ 1.1-ում ներկայացված են ՀԳԱ ենթաինդեքսները ձևավորող 14 ցուցանիշները: Ստորև հակիրճ կնկարագրենք ՀԳԱ ինդեքսի կազմությունը և դրա ձևավորման մեթոդաբանությունը:

«Տնտեսական մասնակություն և հնարավորություններ» ենթաինդեքսը ձևավորվում է հետևյալ երեք ցուցանիշների միջոցով՝ աշխատուժում մասնակցության անհավասարություն, վարձատրության անհավասարություն և առաջխաղացման անհավասարություն: Մասնակցության անհավասարությունը գնահատվում է կանանց և տղամարդկանց միջև աշխատուժում ներգրավվածության տարբերությունը հաշվելու միջոցով: Վարձատրության անհավասարությունը հաշվարկվում է երկու ցուցանիշների համադրման միջոցով. դրանցից մեկը կանանց և տղամարդկանց եկամուտների գնահատված հարաբերությունն է, իսկ մյուսը՝ նույնատիպ աշխատանքի համար ստացվող աշխատավարձի հավասարության գնահատականն է: Կանանց և տղամարդկանց միջև առաջխաղացման անհավասարությունը ևս որոշվում է երկու ցուցանիշների հիման վրա. առաջինը՝ օրենսդրական դաշտում, ինչպես նաև բարձրաստիճան և կառավարչական պաշտոններում ներգրավված կանանց և տղամարդկանց քանակական հարաբերակցությունն է, իսկ երկրորդը՝ տեխնիկական և մասնագիտական աշխատանքներում ներգրավված կանանց և տղամարդկանց քանակական հարաբերակցությունն է:

«Կրթության ձեռքբերում» ենթաինդեքսը ներկայացնում է կանանց և տղամարդկանց միջև կրթության հասանելիության անհավասարությունը (այսուհետ նաև՝ գենդերային ճեղքվածք) տարրական, միջնակարգ և բարձրագույն կրթական համակարգերում սովորողների՝ ըստ սեռերի թվաքանակների հարաբերակցության տեսքով: Պետությունների ունակությունը՝ երկարաժամկետում կանանց և տղամարդկանց հավասարապես կրթություն տրամադրելու տեսանկյունից հաշվվում է կանանց և տղամարդկանց գրագիտության (կրթվածության) մակարդակների հարաբերակցության միջոցով:

«Առողջություն և կյանքի տևողություն» ենթաինդեքսը նպատակ ունի գնահատել գենդերային ճեղքվածքը առողջության տեսանկյունից՝ երկու ցուցանիշների համադրման միջոցով: Առաջին ցուցանիշը երկու սեռերի (իգական, արական) միջև նորածինների թվաքանակների հարաբերակցությունն է, որի կիրառման հիմնական նպատակը հասարակություններում նորածինների միջև սեռով պայմանավորված խտրականությունը գնահատելն է: Երկրորդ ցուցանիշը՝ առողջ կյանքի տևողության գենդերային ճեղքվածքի գնահատականն է, որը չափվում է կանանց և տղամարդկանց՝ առողջ ապրելու միջին տարիների քանակական հարաբերակցության միջոցով: «Առողջ ապրելու» գնահատականները կազմելիս հաշվի են առնվում մարդկանց կորսված տարիները

բռնությունների, հիվանդությունների, թերասնման և առողջությանը վնասող այլ հանգամանքների պատճառով:

«Քաղաքական մասնակցություն» ենթաինդեքսը չափում է քաղաքական որոշումների կայացման բարձրագույն օղակներում կանանց և տղամարդկանց միջև անհավասարությունը՝ հիմնվելով նախարարական և պատգամավորական պաշտոններում կանանց ներգրավվածության ցուցանիշի վրա: Ի լրումն դրան՝ ենթաինդեքսի հաշվարկներում ներառվում է նաև պետության ղեկավարի պաշտոնում (վարչապետ կամ նախագահ) վերջին 50 տարում կանանց և տղամարդկանց կողմից պաշտոնավարելու տարիների հարաբերակցությունը: Տվյալների սղության պատճառով հաշվարկներում չեն ներառվում տեղական ինքնակառավարման մարմիններում պաշտոն զբաղեցնող կանանց ներգրավվածության վերաբերյալ գնահատականները:

ՀԳԱ ինդեքսի հիմքում ընկած է **երեք սկզբունք**, որոնք որոշիչ դեր են խաղում ինդեքսի հաշվարկման գործընթացում:

Առաջին սկզբունքը վերաբերում է ինդեքսի կառուցման հիմնական տրամաբանությանը: Երկրները դասակարգվում են ըստ գենդերային ճեղքվածքի, այսինքն՝ ըստ կանանց և տղամարդկանց միջև գենդերային անհավասարության աստիճանի և ոչ թե ըստ երկրների զարգացածության մակարդակի:

Երկրորդ սկզբունքը, որ ձևավորում է ՀԳԱ ինդեքսը, վերաբերում է ցուցանիշների ընտրման տրամաբանությանը: Այսպես, ցուցանիշները պետք է լինեն ելքային՝ այսինքն ընդհանրական բոլոր երկրների համար, և չպետք է կախվածություն ունենան կոնկրետ որևէ երկրին բնորոշ քաղաքականություններից, իրավունքներից, մշակույթից կամ ավանդույթներից:

Երրորդ սկզբունքը վերաբերում է երկրները դասակարգելու այն գաղափարին, համաձայն որի տվյալ երկիրն իր ինդեքսը բարելավում է միայն այն դեպքում, եթե երկրում «նեղացվել» է գենդերային ճեղքվածքը և ոչ թե այն պարագայում, երբ կանայք ավելի մեծ հասանելիություն ունեն ռեսուրսներին, քան տղամարդիկ:

ՀԳԱ ինդեքսի կառուցումը չորս քայլից բաղկացած գործընթաց է: Սկզբում ցուցանիշներից ստացված տվյալները վերածվում են կին/տղամարդ քանակական հարաբերակցության, այնուհետև ստացված հարաբերակցությունների համար որոշվում է «հավասարության ցուցիչը», որը հիմնականում բոլոր հարաբերակցությունների համար ընդունվում է որպես 1: Այսինքն, եթե հարաբերակցությունը հավասար է 1-ի, համարվում է, որ տվյալ ցուցանիշի պարագայում գենդերային ճեղքվածք գոյություն չունի: Ըստ սեռի նորածինների

թվաքանակների հարաբերակցության համար հավասարության ցուցիչ է ընդունվում 0.944-ը, իսկ առողջ կյանքի սպասվող տարիների հարաբերակցության համար 1.06-ը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կանայք ընդհանուր առմամբ ավելի երկար են ապրում, քան տղամարդիկ: Այնուհետև հաշվվում են ենթաինդեքսները՝ որպես դրանց հիմքում ընկած ցուցանիշների կշռված միջին: Ընդ որում, ցուցանիշների կշիռները հաշվարկվում են այնպիսի մեթոդաբանությամբ, որով ապահովվում է ենթաինդեքսի վրա բոլոր ցուցանիշների հարաբերական հավասար ազդեցությունը: Այնուհետև, ՀԳԱ ինդեքսը հաշվարկվում է որպես ստացված ենթաինդեքսների միջին թվաբանական: Ինչպես ենթաինդեքսները, այնպես էլ ՀԳԱ ինդեքսը տատանվում է 0-ից 1 միջակայքում, որտեղ 1-ը ցույց է տալիս սեռերի միջև լիակատար հավասարություն, իսկ 0-ն՝ լիակատար անհավասարություն:

Նկատենք, որ ինդեքսը 100-ով բազմապատկելու դեպքում այն կարելի է մեկնաբանել որպես տվյալ երկրի՝ գենդերային անհավասարությունը հաղթահարած սահման՝ տոկոսային արտահայտությամբ: Օրինակ, եթե ՀԳԱ ինդեքսը կազմել է 0.687, ապա կարելի է ասել, որ տվյալ երկիրը հաղթահարել է գենդերային անհավասարությունը 68.7%-ով, կամ մնում է հաղթահարել 31.3%-ը՝ լիակատար գենդերային հավասարության հասնելու համար:

2. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Համաշխարհային գենդերային անհավասարության ինդեքսի միջազգային գնահատումները 2020 թվականի համար ներկայացված են ստորև:

2.1. Համաշխարհային տենդենցներն ու արդյունքները

Ընդհանուր առմամբ, աշխարհում գենդերային անհավասարությունը հաղթահարված է 67.7%-ով, ինչը 0.6 տոկոսային կետով ցածր է 2019 թվականի ցուցանիշից: Համաձայն ՀՏՀ գնահատումների՝ համաշխարհային գենդերային ճեղքվածքն ամբողջությամբ փակելու համար աշխարհից կպահանջվի միջին հաշվով ևս 135.6 տարի:

Քաղաքական մասնակցության մասով գենդերային անհավասարությունն ամենամեծն է չորս ենթաինդեքսների շարքում. գենդերային ճեղքվածքը փակ է ընդամենը 22%-ով, ինչը 2.4 տոկոսային կետով ավելի ցածր է 2019-ի ցուցանիշից: Ինդեքսի հաշվումներում ներառված 156 երկրներում կանայք ներկայացնում են ընդհանուր թվով 35,500 պատգամավորների 26.1%-ը, և 3,400 նախարարների միայն 22.6%-ը: Ներկայացված երկրներից 81-ում 2021թ. հունվարի 15-ի դրությամբ կանայք երբևէ չեն ղեկավարել երկիրը: *Ներկա պայմաններում, ՀՏՀ գնահատումների համաձայն՝ կպահանջվի ևս 145.5 տարի, որպեսզի քաղաքական մասնակցության մասով աշխարհում փակվի գենդերային ճեղքվածքը:*

Տնտեսական մասնակցության և հնարավորությունների ենթաինդեքսը գենդերային ճեղքվածքով շարունակում է մնալ երկրորդ ամենամեծը: Համաձայն գնահատումների՝ աշխարհում այս մասով անհավասարությունը հաղթահարված է 58%-ով: *Չնայած 2020-ի ցուցանիշը փոքր-ինչ բարելավվել է, ՀՏՀ գնահատումները փաստում են, որ աշխարհից կպահանջվի ևս 276.6 տարի՝ տնտեսական մասնակցության և հնարավորությունների մասով լիակատար հավասարության հասնելու համար:* Այժմ գոյություն ունի երկու միմյանց հակազդող միտում, որոնք որոշիչ են այս ենթաինդեքսի համար: Առաջինը բարձր որակավորում պահանջող աշխատատեղերում կանանց թվաքանակի ավելացման և նույնատիպ պաշտոնի համար աշխատավարձերի հավասարության մեծացման դրական դինամիկան է: Երկրորդը եկամտային անհավասարությունների զարգացող դինամիկան է, ինչպես նաև կառավարչական պաշտոններում կանանց ներգրավվածության ցածր մակարդակը (կանայք ներկայացնում են կառավարչական պաշտոնների միայն 27%-ը):

«Կրթության ձեռքբերում», ինչպես նաև «Առողջություն և կյանքի տևողություն» ենթաինդեքսների մասով աշխարհում հաստատվել է գրեթե

լիակատար գենդերային հավասարություն: Կրթության ձեռքբերման մասով գենդերային ճեղքվածքը փակ է գրեթե 95%-ով, իսկ 37 երկիր արդեն իսկ հասել է լիակատար հավասարության: *Համաձայն ՀՏՀ գնահատումների՝ աշխարհից կպահանջվի ևս 14.2 տարի, որպեսզի այս ճեղքվածքն ամբողջությամբ փակվի:* Առողջության և կյանքի տևողության մասով աշխարհը հաղթահարել է գենդերային անհավասարության 96%-ը, չնայած որոշակի անկում է նկատվում 2019-ի համեմատ և դա պայմանավորված չէ ԿՈՎԻԴ-19-ով: *Նկատենք, որ այս ենթաինդեքսի մասով դեռևս պարզ չէ, թե քանի տարի անց աշխարհում կհաստատվի լիակատար հավասարություն:* Պետք է նշել, որ չնայած մյուս երկու ենթաինդեքսների համեմատ և՛ կրթության, և՛ առողջության մասով առաջընթացը բավական բարձր է, համավարակի պատճառով 2020-ին գենդերային անհավասարության հաղթահարման հետ կապված այս ցուցանիշներում ևս նկատվել է որոշակի հետընթաց:

2.2. ԿՈՎԻԴ-19-ի ազդեցությունը գենդերային անհավասարության վրա

Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ), LinkedIn-ի և Ipsos-ի կողմից աշխարհի որոշ տնտեսությունների համար հավաքագրված տվյալների միջոցով հնարավոր է եղել գնահատել ԿՈՎԻԴ-19-ի համավարակի ազդեցությունը տնտեսական մասնակցության գծով գենդերային ճեղքվածքի վրա: ԱՄԿ-ի գնահատումների համաձայն՝ աշխատանքը կորցրել է աշխատող կանանց 5%-ը, իսկ տղամարդկանց՝ 3.9%-ը: LinkedIn-ի տվյալները ցույց են տալիս, որ կանանց ներգրավվածությունը կառավարչական պաշտոններում նկատելի անկում է ապրել: Չնայած որոշ ոլորտներում նկատվում է հակառակ տենդենցը (ՏՏ, ֆինանսական ծառայություններ, առողջապահություն և այլն), այդուհանդերձ, կանանց բարձր ներգրավվածությամբ մի շարք ոլորտներում անկումային ցուցանիշներն ավելի զգալի են (սպառողական ոլորտ, շահույթ չհետապնդող գործունեություն, մամուլ և հաղորդակցություն): Ավելին, Ipsos-ի հետազոտությունները փաստում են, որ համավարակի ընթացքում աշխարհի շատ երկրներում կազմակերպված լոքդաունների հետևանքով բավական շատ դժվարություններ են ստեղծվել աշխատող այն կանանց համար, ովքեր նաև երեխա են խնամում:

ԿՈՎԻԴ-19-ի հետևանքով աշխարհում ավտոմատացման և թվայնացման գործընթացներն ավելի են ակտիվացել, ինչն իր հերթին լրացուցիչ բարդություններ է ստեղծել աշխատուժի շուկայում: Արդյունքում «ապագայի աշխատատեղերի» ուղղություններով գենդերային հավասարության հասնելու համար լրջագույն մարտահրավերներ են առաջացել, քանի որ մասնագիտությունների գծով խորացել է գենդերային սեգրեգացիան: Գենդերային ճեղքվածքներն ավելի հավանական են այն ոլորտներում, որոնք պահանջում են տեխնիկական հմտություններ: Օրինակ,

համակարգչային ցանցերի ոլորտում աշխատուժի միայն 14%-ն են կանայք, ինժեներության ոլորտում՝ միայն 20%-ը, իսկ տվյալագիտության ոլորտում՝ 32%-ը:

Կարելի է փաստել, որ կանանց համար տնտեսական հնարավորությունների զարգացման դինամիկան մտահոգիչ է, իսկ ՀՏՀ եզրակացությունների համաձայն՝ գենդերային հավասարությունը վերականգնելու քաղաքականություններն ու փորձերը պարզապես ժամանակի հրամայականն են՝ ստեղծված մարտահրավերները հաղթահարելու համար:

2.3. Գենդերային անհավասարությունն աշխարհի տարբեր հատվածներում

Գենդերային հավասարության չափանիշներով Իսլանդիան շարունակում է աշխարհում մնալ առաջատարը. գենդերային անհավասարությունն այս երկրում հաղթահարվել է 89.2%-ով: Երկրորդ տեղում Ֆինլանդիան է (86.1%), իսկ երրորդ տեղում՝ Նորվեգիան (84.9%): Բացի այս երկրներից, կանանց և տղամարդկանց միջև հավասարությունը 80 և ավելի տոկոսով հաղթահարված է ևս 6 երկրներում՝ Նոր Զելանդիա (4-րդ տեղ՝ 84.0%), Շվեդիա (5-րդ տեղ՝ 82.3%), Նամիբիա (6-րդ տեղ՝ 80.9%), Ռուանդա (7-րդ տեղ՝ 80.5%), Լիտվա (8-րդ տեղ՝ 80.4%) և Իռլանդիա (9-րդ տեղ՝ 80.0%): Աշխարհի տասնյակը եզրափակում է Շվեյցարիան, որտեղ գենդերային ճեղքվածքը փակված է 79.8%-ով:

Նկատենք, որ աշխարհի տարբեր հատվածներում գենդերային հավասարությունը բավական տարբեր մակարդակների վրա է գտնվում: Գենդերային անհավասարության հաղթահարման առումով առաջատարը Արևմտյան Եվրոպան է (77.6%), և այս տարածաշրջանում կպահանջվի ևս 52.1 տարի՝ լիակատար հավասարության հասնելու համար: Երկրորդը Հյուսիսային Ամերիկան է (76.4%՝ 61.5 տարի), երրորդը՝ Լատինական Ամերիկան և Կարիբյան ավազանը (71.2%՝ 68.9 տարի): Հաջորդն Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանն է (71.1%՝ 134.7 տարի), որի կազմում է նաև Հայաստանը: Նկատենք, որ գենդերային անհավասարությունը աշխարհի մյուս տարածաշրջաններում հաղթահարված է 70-ից ցածր տոկոսով, և այդ տարածաշրջաններում լիակատար հավասարության հասնելու համար կպահանջվի 100-ից ավելի տարի (ինչպես և մեր տարածաշրջանում): Դրանք են՝ Արևելյան Ասիայի և Խաղաղ օվկիանոսի տարածաշրջանը (68.9%՝ 165.1 տարի), Ենթասահարական Աֆրիկան (67.2%՝ 121.7 տարի), Հարավային Ասիան (62.3%՝ 195.4 տարի) և Մերձավոր Արևելքի ու Հյուսիսային Աֆրիկայի տարածաշրջանը (60.9%՝ 142.4 տարի):

3. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2020-ին ՀԳԱ ինդեքսը Հայաստանում կազմել է 0.673, և 156 երկրների շարքում Հայաստանը զբաղեցրել է 114-րդ հորիզոնականը (Գծապատկեր 3.1): **Կարող ենք արձանագրել, որ 2019-ի համեմատ, երբ ՀՀ-ն հաղթահարել էր գենդերային անհավասարությունը 68.4%-ով, 2020-ին գենդերային ճեղքվածքն ավելի է լայնացել և կազմում է 67.3%**՝ նախորդ տարվա ցուցանիշը թուլացնելով 1.1 տոկոսային կետով: Նկատենք, որ **Հայաստանը զգալիորեն վատթարացրել է նաև իր դիրքը՝ 2019 թվականի 98-րդ հորիզոնականի փոխարեն 2020-ին զբաղեցնելով 114-րդ հորիզոնականը**՝ աշխարհի վարկանիշային աղյուսակում հետ ընկնելով 16 հորիզոնականով:

Ինչպես երևում է Գծապատկեր 3.1-ից, **Հայաստանի Հանրապետության պատմության մեջ 2020-ին զբաղեցրած դիրքն աննախադեպ ցածր է**, քանի որ մինչև 2020 թվականը Հայաստանն իր դիրքով վատագույն արդյունք է գրանցել 2015-ին՝ զբաղեցնելով 105-րդ հորիզոնականը, որը 2020-ի դիրքից բարձր է 9 հորիզոնականով:

Գծապատկեր 3.1. ՀԳԱ ինդեքսը Հայաստանում և ՀՀ դիրքն ըստ ՀԳԱ ինդեքսի, 2007-2020թթ.



Նշենք, որ **ՀԳԱ ինդեքսի 2020թ. հայաստանյան ցուցանիշը ցածր է նույնիսկ 2017թ. արդյունքից**, ինչը փաստում է, որ երկրում գենդերային հավասարության հետ կապված ինստիտուցիոնալ որոշ խոցելիություններ՝ 2020-ին ՀՀ-ում տեղի ունեցած իրադարձությունների (կորոնավիրուսային համավարակ և Արցախյան պատերազմ) արդյունքում ավելի են խորացել, որի պատճառով

Հայաստանում կանանց և տղամարդկանց միջև անհավասարության հաղթահարման գործընթացը բավականին թուլացել է:

Հետահայաց դիտելով 2007 թվականից ի վեր Հայաստանում գենդերային ճեղքվածքի դինամիկան, պետք է փաստել, որ 2010-2014թթ. գենդերային անհավասարության խորացման շրջափուլից հետո երկրում նկատելիորեն արագացել էր գենդերային անհավասարության հաղթահարման գործընթացը՝ ուղեկցվելով նաև աշխարհում դիրքային բարելավմամբ: Այդուհանդերձ, 2020-ին ՀԳԱ ինդեքսով Հայաստանի գրանցած հետընթացը պատմականորեն աննախադեպ է իր անկման տեմպով, ինչի արդյունքում կասկածի տակ է դրվում գենդերային անհավասարության արագ հաղթահարման հեռանկարը գալիք տարիներին:

Հայաստանում 2020-ին գենդերային անհավասարության հաղթահարման գործընթացը համեմատելով աշխարհի միջին գնահատականների հետ (Գծապատկեր 3.2), պարզ է դառնում, որ **ՀԳԱ ինդեքսով Հայաստանը հետ է աշխարհի միջինից 0.4 տոկոսային կետով**:

Գծապատկեր 3.2. ՀՀ ՀԳԱ ինդեքսը/ենթաինդեքսները և աշխարհի միջին գնահատականները, 2020 թվական



ՀԳԱ ինդեքսը ձևավորող 4 հիմնասյուների տեսանկյունից Հայաստանը 2020թ. արդյունքներով առաջ է աշխարհի միջին գնահատականներից «Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ» և «Կրթության

ձեռքբերում» ենթաինդեքսներով: Այսպես, առաջինի մասով Հայաստանը հաղթահարել է գենդերային անհավասարությունը 65.5%-ով, մինչդեռ աշխարհում այն հաղթահարված է միջին հաշվով 58.3%-ով, իսկ երկրորդի մասով ՀՀ-ում գենդերային ճեղքվածքը փակ է գրեթե ամբողջությամբ (99.8%), և այն գերազանցում է աշխարհի միջին ցուցանիշը 4.8 տոկոսային կետով: «Առողջություն և կյանքի տևողություն» ենթաինդեքսի գծով 2020-ին ՀՀ-ում գենդերային անհավասարությունը հաղթահարվել է 95%-ով, ինչը հետ է աշխարհի միջին ցուցանիշից 0.7 տոկոսային կետով:

Քաղաքական մասնակցության մասով կանանց և տղամարդկանց միջև անհավասարության հաղթահարմամբ Հայաստանն էականորեն զիջում է աշխարհին: Այսպես, 2020-ին «Քաղաքական մասնակցություն» ենթաինդեքսով անհավասարությունը ՀՀ-ում կազմել է 9.1%, այնինչ աշխարհում այս ուղղությամբ գենդերային ճեղքվածքը փակ է 21.8%-ով: Այսինքն, այս առումով 2020-ին Հայաստանը հետ է մնում աշխարհից միջին հաշվով 12.7 տոկոսային կետով, թեև աշխարհի միջին գնահատականն ինքնին խոսում է քաղաքական մասնակցության ուղղությամբ գենդերային անհավասարության դեռևս խոր մակարդակի մասին:

Հայաստանում գենդերային անհավասարության հաղթահարման գործընթացի վերաբերյալ ավելի ամբողջական պատկերացում կազմելու համար Աղյուսակ 3.1.-ում ներկայացված է ՀԳԱ ինդեքսը ձևավորող բաղադրիչների ամբողջական բացվածքը և դրանց համեմատականը նախորդ տարվա համապատասխան արդյունքների հետ: **Նկատենք, որ ՀԳԱ ինդեքսի 2020թ. ՀՀ ցուցանիշի անկումը «Քաղաքական մասնակցություն» և «Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ» ենթաինդեքսների ցուցանիշների վատթարացման հետևանք է:**

Այսպես, 2020-ին **«Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ»** ենթաինդեքսի ցուցանիշը 2019-ի համեմատ նվազել է 1.8 տոկոսային կետով, և այժմ նշված բաղադրիչի մասով կանանց և տղամարդկանց միջև անհավասարությունը բաց է մնում 34.5%-ով: Միաժամանակ, եթե այս ուղղությամբ 2019-ին Հայաստանն աշխարհում 78-րդն էր, ապա 2020-ին գրանցվել է նկատելի հետընթաց և մյուս երկրների շարքում Հայաստանը զբաղեցրել է 96-րդ հորիզոնականը: **Այս անկումը հիմնականում պայմանավորված է երկու գործոնով:** Ենթաինդեքսի վրա մի կողմից ազդել է աշխատուժում կանանց և տղամարդկանց ներգրավվածության անհավասարության խորացումը՝ 2019-ի ցուցանիշը թուլացնելով 5.1 տոկոսային կետով և կազմելով 69.1%: Մյուս գործոնն օրենսդիր համակարգում, բարձրաստիճան և ղեկավար պաշտոններում կանանց և տղամարդկանց զբաղվածության անհավասար մակարդակների խորացումն է, որը 2020-ին 2019-ի ցուցանիշից պակաս է 6.4 տոկոսային կետով և կազմում է 35.5%:

Աղյուսակ 3.1. ՀԳԱ բաղադրիչները և դրանց հաշվարկում օգտագործվող ցուցանիշները Հայաստանում, 2019-2020թթ.

		Դիրք	ՀՀ ինդեքս	Աշխարհի միջին, %	Կին	Տղամարդ
Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ	**2019**	**78**	**67.3%**	**58.2%**		
	2020	**96**	**65.5**	**58.3%**		
Աշխատուժի մասնակցության մակարդակ	2019	96	74.2%	66.1%	55.8%	75.2%
	2020	112	69.1%	65.5%	51.0%	73.7%
Միատեսակ աշխատանքների վարձատրությունների հավասարություն, 1-7 (լավագույն)	2019	25	73.1%	61.3%	-	-
	2020	24	75.1%	62.8%	-	-
Վաստակած եկամուտ, ԱՄՆ դոլար	2019	112	52.2%	49.9%	6,100	11,700
	2020	117	49.9%	49.4%	9,200	18,500
Օրենսդիր համակարգում, բարձրաստիճան և ղեկավար պաշտոններում զբաղվածություն	2019	88	41.9%	35.6%	29.5%	70.5%
	2020	106	35.5%	34.9%	26.2%	73.8%
Մասնագիտական և տեխնիկական աշխատանքներում զբաղվածություն	2019	1	100%	75.6%	64.2%	35.8%
	2020	1	100%	75.5%	51.3%	48.8%
Կրթության ձեռքբերում	**2019**	**45**	**99.8%**	**95.4%**		
	2020	**46**	**99.8%**	**95.0%**		
Գրագիտության մակարդակ	2019	56	99.9%	89.9%	99.7%	99.8%
	2020	56	99.9%	89.7%	99.7%	99.8%
Տարրական կրթական համակարգում ներգրավվածություն	2019	94	99.6%	75.7%	90.6%	90.9%
	2020	97	99.6%	75.5%	90.6%	90.9%
Միջնակարգ կրթական համակարգում ներգրավվածություն	2019	1	100%	95.4%	88.1%	87.5%
	2020	1	100%	95.0%	88.1%	87.5%
Բարձրագույն կրթական համակարգում ներգրավվածություն	2019	1	100%	93.1%	62.7%	47.1%
	2020	1	100%	92.7%	62.7%	47.1%
Առողջություն և կյանքի տևողություն	**2019**	**148**	**94.8%**	**95.8%**		
	2020	**150**	**95.0%**	**95.7%**		
Նորածինների հարաբերակցություն ըստ սեռի	2019	150	89.8%	92.5%	-	-
	2020	153	90.2%	92.5%	-	-
Առողջ կյանքի տևողության տարիներ	2019	1	106.0%	103.4%	68.7	63.6
	2020	1	106.0%	102.9%	69.1	64.9
Քաղաքական մասնակցություն	**2019**	**114**	**11.8%**	**23.9%**		
	2020	**132**	**9.1%**	**21.8%**		
Կանայք խորհրդարանում	2019	64	32.0%	29.8%	24.2%	75.8%
	2020	84	29.4%	31.2%	22.7%	77.3%
Կանայք կառավարությունում	2019	127	7.6%	25.5%	7.1%	92.9%
	2020	148	0.0%	23.5%	0.0%	100%
Պետության կին/տղամարդ ղեկավարների իշխանության տարիներ (վերջին 50 տարիների կտրվածքով)	2019	73	0.0%	19.0%	0	50
	2020	76	0.0%	14.4%	0	50

«Քաղաքական մասնակցություն» ենթաինդեքսի հայաստանյան ցուցանիշը 2020 թվականին ևս անկումային է և 2019-ի համեմատ ցածր է 2.7 տոկոսային կետով: Եթե 2019-ին հաջողվել էր քաղաքական մասնակցության հետ կապված կանանց և տղամարդկանց միջև անհավասարության ճեղքվածքը փակել 11.8%-ով, ապա 2020-ին անհավասարությունը հաղթահարված է միայն 9.1%-ով, իսկ աշխարհի վարկանիշային աղյուսակում Հայաստանը 2020-ին զբաղեցնում է 132-րդ հորիզոնականը, ինչը 2019-ի զբաղեցրած դիրքից ցածր է 18 հորիզոնականով: **Անկումը հիմնականում պայմանավորված է կառավարությունում կանանց ներգրավվածության զրոյական մակարդակով**, որը 2019-ին կազմել է 7.6%: Մյուս կողմից՝ նվազել է կանանց ներկայացվածությունը նաև խորհրդարանում, որը 2019-ին կազմել է 32%, իսկ 2020-ին՝ 2.6 տոկոսային կետով ավելի ցածր՝ 29.4%:

«Առողջություն և կյանքի տևողություն» ենթաինդեքսի ցուցանիշը 2020-ին 2019-ի համեմատ բարելավվել է 0.2 տոկոսային կետով և կազմել 95%, որը պայմանավորված է ըստ սեռի նորածինների հարաբերակցության ցուցանիշի բարելավմամբ: Վերջինս 2019-ի համեմատ 2020-ին բարձր է 0.4 տոկոսային կետով և կազմում է 90.2%: Այդուհանդերձ, հաշվի առնելով, որ այս ցուցանիշի մասով աշխարհում հավասարության ցուցիչը (կենսաբանորեն ընդունելի մակարդակը) 94.4%-ն է, Հայաստանում (հասարակության որոշ շերտերում) շարունակվում է նկատվել նորածնի սեռով պայմանավորված խտրական վերաբերմունք: Նշվածն իր հերթին մտահոգվելու առիթ պետք է հանդիսանա հատկապես առողջապահական ոլորտը համակարգող պետական մարմինների համար՝ ճիշտ քաղաքականությունների մշակման և իրագործման միջոցով վերոգրյալ խնդրի շրջանակներում հավասարակշռությունը վերականգնելու համար:

«Առողջություն և կյանքի տևողություն» ենթաինդեքսի մասով չնայած բավական բարձր ցուցանիշներին, այդուհանդերձ, պետք է նկատենք, որ միջազգային վարկանիշային աղյուսակում ՀՀ-ն շարունակում է զբաղեցնել վերջին հորիզոնականները: Ավելին, 2019-ի համեմատ 2020-ին Հայաստանը հետ է ընկել 2 հորիզոնականով և 150-րդն է աշխարհում:

«Կրթության ձեռքբերում» ենթաինդեքսի և դրա բաղկացուցիչների գնահատականները 2020-ին շարունակել են պահպանվել բավական բարձր մակարդակում, և ըստ ՀՏՀ գնահատումների՝ Հայաստանում կրթության մասով գենդերային անհավասարությունն ընդհանուր առմամբ հաղթահարված է 99.8%-ով: Սակայն նկատենք, որ 2019-ի համեմատ այս ենթաինդեքսի մասով 2020-ին Հայաստանը հետ է ընկել 1 հորիզոնականով և 46-րդն է աշխարհում: Պետք է փաստել նաև, որ գրագիտության մակարդակով կանայք և տղամարդիկ Հայաստանում գրեթե հավասար են, սակայն այս ցուցանիշով Հայաստանն

աշխարհում 56-րդն է, ինչը նշանակում է, որ այս ուղղությամբ ևս դեռ կան անելիքներ: Ընդհանուր առմամբ, քանի որ «Կրթության ձեռքբերում» ենթաինդեքսի հիմքում ընկած ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանությամբ պայմանավորված ենթաինդեքսում հաշվի չեն առնվում երկրների կրթական համակարգերի զարգացածության աստիճանները, և փոխարենը հաշվումները հիմնվում են միայն տվյալ երկրում գործող կրթական համակարգում կանանց և տղամարդկանց հավասարության վրա՝ երկրների նման բարձր ցուցանիշները (աշխարհի միջինը 95% է) այդքան էլ զարմանալի չեն:

4. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ

Համաձայն ՀՏՀ դասակարգումների, Հայաստանը ներառված է Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում: Վերլուծության այս մասում կներկայացնենք նշված տարածաշրջանային երկրների, ինչպես նաև հարևան երկրների հետ Հայաստանի համեմատականները՝ ՀԳԱ ինդեքսի և վարկանիշային աղյուսակներում դրա դիրքի առնչությամբ:

Աղյուսակ 4.1. ՀԳԱ ինդեքսը Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներում, 2019-2020թթ.

2019 թվական				2020 թվական			
Երկիր	Դիրքը տարածաշրջանում	Դիրքն աշխարհում	Ինդեքս, %	Երկիր	Դիրքը տարածաշրջանում	Դիրքն աշխարհում	Ինդեքս, %
Լատվիա	1	11	78.5	Լիտվա	1	8	80.4
Ալբանիա	2	20	76.9	Սերբիա	2	19	78.0
Մոլդովա	3	23	75.7	Լատվիա	3	20	77.8
Էստոնիա	4	26	75.1	Ալբանիա	4	25	77.0
Բելառուս	5	29	74.6	Մոլդովա	5	28	76.8
Լիտվա	6	33	74.5	Բելառուս	6	33	75.8
Սլովենիա	7	36	74.3	Բուլղարիա	7	38	74.6
Սերբիա	8	39	73.6	Սլովենիա	8	41	74.1
Լեհաստան	9	40	73.6	Խորվաթիա	9	45	73.3
Բուլղարիա	10	49	72.7	Էստոնիա	10	46	73.3
Ռումինիա	11	55	72.4	Մոնտենեգրո	11	48	73.2
Ուկրաինա	12	59	72.1	Վրաստան	12	49	73.2
Խորվաթիա	13	60	72.0	Հս. Մակեդոնիա	13	73	71.5
Սլովակիա	14	63	71.8	Ուկրաինա	14	74	71.4
Բոսնիա և Հերցեգովինա	15	69	71.2	Լեհաստան	15	75	71.3
Հս. Մակեդոնիա	16	70	71.1	Բոսնիա և Հերցեգովինա	16	76	71.3
Մոնտենեգրո	17	71	71.0	Սլովակիա	17	77	71.2
Ղազախստան	18	72	71.0	Չեխիա	18	78	71.1
Վրաստան	19	74	70.8	Ղազախստան	19	80	71.0
Չեխիա	20	78	70.6	Ռուսաստան	20	81	70.8
Ռուսաստան	21	81	70.6	Ռումինիա	21	88	70.0
Ղրղզստան	22	93	68.9	Հունգարիա	22	99	68.8
Ադրբեջան	23	94	68.7	Ադրբեջան	23	100	68.8
Հայաստան	**24**	**98**	**68.4**	Ղրղզստան	24	108	68.1
Հունգարիա	25	105	67.7	**Հայաստան**	**25**	**114**	**67.3**
Տաջիկստան	26	137	62.6	Տաջիկստան	26	125	65.0

Ինչպես երևում է Աղյուսակ 4.1-ից՝ 2019 թվականի համեմատությամբ **2020-ին Հայաստանը տարածաշրջանային վարկանիշային աղյուսակում վատթարացրել է իր դիրքը 1 հորիզոնականով և այժմ զբաղեցնում է նախավերջին՝ 25-րդ հորիզոնականը:** Ի տարբերություն 2019-ի, երբ տարածաշրջանում առաջատարը Լատվիան էր, այս տարի առաջին հորիզոնականը զբաղեցրել է Լիտվան, որն ի դեպ աշխարհում 8-րդ երկիրն է գենդերային անհավասարության հաղթահարման տեմպերով և 2020-ին փակել է գենդերային ճեղքվածքը 80.4%-ով:

Նկատենք նաև, որ Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) բոլոր պետությունները ՀԳԱ ինդեքսով և աշխարհում զբաղեցրած իրենց դիրքով առաջ են Հայաստանից: Այսպես, ԵԱՏՄ երկրներից տարածաշրջանում առաջինը Բելառուսն է (6-րդ հորիզոնական), որը գենդերային անհավասարությունը հաղթահարել է 75.8%-ով և աշխարհում 33-րդն է: Երկրորդը Ղազախստանն է (71%, տարածաշրջանում՝ 19-րդը, աշխարհում՝ 80-րդը), որին հաջորդում է Ռուսաստանը (70.8%, տարածաշրջանում՝ 20-րդը, աշխարհում՝ 80-րդը), այնուհետև Ղրղզստանը (68.1%, տարածաշրջանում՝ 24-րդը, աշխարհում՝ 108-րդը):

ԵԱՏՄ երկրներից միայն Ռուսաստանին է հաջողվել 2019-ի համեմատ 2020-ին միաժամանակ և՛ լավացնել ՀԳԱ ինդեքսի ցուցանիշը, և՛ պահպանել աշխարհի վարկանիշային աղյուսակում իր դիրքը, իսկ Բելառուսը, թեև առաջընթաց է գրանցել ՀԳԱ ինդեքսով, սակայն թուլացրել է դիրքերը 4 հորիզոնականով: Մյուս երկրներում գրանցվել է թե՛ ինդեքսի, թե՛ աշխարհում զբաղեցրած դիրքի հետընթաց:

Աղյուսակ 4.2-ը համեմատության մեջ ցույց է տալիս Հայաստանի դիրքը հարևան երկրների նկատմամբ: Ինչպես պարզ է դառնում համեմատության արդյունքում, **2020 թվականի արդյունքներով Հայաստանը միջանկյալ դիրք է զբաղեցնում հարևան երկրների շարքում**: Առաջատարն այստեղ Վրաստանն է, որին հաջողվել է գենդերային անհավասարությունը երկրում հաղթահարել 73.2%-ով՝ աշխարհում զբաղեցնելով 49-րդ հորիզոնականը: Հաջորդն Ադրբեջանն է՝ 68.8% և 100-րդ հորիզոնականի ցուցանիշներով: Հայաստանից հետ են մնում Թուրքիան (63.8%, 133-րդ հորիզոնական) և Իրանը (58.2%, 150-րդ հորիզոնական):

Ի դեպ, նշենք, որ ՀՀ հարևան երկրների շարքում, ինչպես պարզ է դառնում նախորդ աղյուսակից՝ 2020 թվականի ընթացքում միայն Վրաստանին է հաջողվել ոչ միայն 2019-ի համեմատ բարձրացնել ՀԳԱ ինդեքսի ցուցանիշը (շուրջ 2.4 տոկոսային կետով), այլև բարելավել դիրքը համաշխարհային վարկանիշային աղյուսակում (25 հորիզոնականով), ինչը նկատելի դրական առաջընթաց է՝ հաշվի առնելով 2020-ի համաշխարհային ճգնաժամի գործոնը և այդ թվում՝ շատ

զարգացած երկրների հետընթացը: Նկատենք նաև (Աղյուսակ 4.2), որ Ադրբեջանն այս տարի ՀԳԱ ինդեքսով Հայաստանից առաջ է 1.5 տոկոսային կետով, իսկ Թուրքիան և Իրանը Հայաստանից հետ են մնում զգալի տարբերությամբ՝ համապատասխանաբար՝ 3.5 և 9.1 տոկոսային կետերով:

Աղյուսակ 4.2. ՀԳԱ ինդեքսը և ենթաինդեքսները Հայաստանում և հարևան երկրներում, 2020 թվական

Ցուցանիշ/Երկիր		Վրաստան	Ադրբեջան	Հայաստան	Թուրքիա	Իրան
Համաշխարհային գենդերային անհավասարություն	Ինդեքս, %	**73.2**	**68.8**	**67.3**	**63.8**	**58.2**
	Դիրք	**49**	**100**	**114**	**133**	**150**
Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ	Ինդեքս, %	70.5	74.8	65.5	48.6	37.5
	Դիրք	64	36	96	140	150
Կրթության ձեռքբերում	Ինդեքս, %	100	99.6	99.8	97.5	95.3
	Դիրք	30	62	46	101	119
Առողջություն և կյանքի տևողություն	Ինդեքս, %	97.7	93.9	95.0	96.7	96.3
	Դիրք	50	154	150	105	129
Քաղաքական մասնակցություն	Ինդեքս, %	24.5	6.9	9.1	12.3	3.6
	Դիրք	60	141	132	114	151

ՀԳԱ ինդեքսի բաղադրիչների մասով հարկ է նշել, որ «Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ» ենթաինդեքսով հարևան երկրների հետ համեմատության մեջ Հայաստանը կրկին (ՀԳԱ ինդեքսի դասավորվածությամբ) զբաղեցնում է միջանկյալ դիրք: «Կրթության ձեռքբերում» ենթաինդեքսով Հայաստանը հետ է մնում միայն Վրաստանից, իսկ «Առողջություն և կյանքի տևողություն» ենթաինդեքսի մասով առաջ է միայն Ադրբեջանից, որն աշխարհում 154-րդն է, իսկ Հայաստանը՝ 150-րդը: «Քաղաքական մասնակցության» ենթաինդեքսով Հայաստանից հետ են մնում թե՛ Ադրբեջանը, թե՛ Իրանը: Ընդ որում, այդ ենթաինդեքսով առաջատարը կրկին Վրաստանն է, որի ցուցանիշը Հայաստանը զիջում է 15.4 տոկոսային կետով, իսկ զբաղեցրած դիրքով Հայաստանը հետ է ընկած Վրաստանից 72 հորիզոնականով:

ԱՄՓՈՓՈՒՄ

Եվ այսպես, ամփոփելով 2020 թվականին աշխարհում և Հայաստանում գենդերային անհավասարության վերաբերյալ վերլուծությունը, կարող ենք նշել, որ.

- 2020-ի արդյունքներով աշխարհում գենդերային անհավասարությունը հաղթահարված է 67.7%-ով, իսկ համաշխարհային գենդերային ճեղքվածքն ամբողջությամբ փակելու համար աշխարհից կպահանջվի միջին հաշվով ևս 135.6 տարի:
- Գենդերային հավասարության չափանիշներով 2020-ին Իսլանդիան շարունակում է աշխարհում մնալ առաջատարը: Գենդերային անհավասարությունն այս երկրում հաղթահարված է 89.2%-ով:
- ԿՈՎԻԴ-19-ի համավարակի ազդեցությունը աշխարհում գենդերային անհավասարության խորացման վրա 2020-ին եղել է նկատելի, և պետությունների կողմից լրացուցիչ քայլեր են անհրաժեշտ՝ առկա մարտահրավերներին դիմակայելու համար:
- ՀԳԱ ինդեքսով Հայաստանը զգալիորեն վատթարացրել է իր դիրքն աշխարհում՝ 2019 թվականի 98-րդ հորիզոնականի փոխարեն 2020-ին զբաղեցնելով 114-րդ հորիզոնականը, ինչը ՀՀ-ի համար պատմականորեն աննախադեպ ցածր ցուցանիշ է: Հայաստանը 2020-ին 2019-ի համեմատ իր դիրքն աշխարհում վատթարացրել է նաև 4 ենթաինդեքսների մասով:
- ՀԳԱ ինդեքսով Հայաստանը հետ է աշխարհի միջինից (0.4 տոկոսային կետ): Նկատելի բացասական տարբերություն կա քաղաքական մասնակցության մասով գենդերային անհավասարության հաղթահարման արդյունքներով (-12.7 տոկոսային կետ):
- Հայաստանում գենդերային ճեղքվածքը 2020-ին ավելի է խորացել՝ նախորդ տարվա ցուցանիշը թուլացնելով 1.1 տոկոսային կետով, որի արդյունքում ՀԳԱ ինդեքսը 2020-ին ՀՀ-ում կազմել է 67.3% (նման ցածր արդյունք չի գրանցվել 2016-ից հետո):
- ՀԳԱ ինդեքսի 2020թ. ՀՀ ցուցանիշի անկումը հիմնականում պայմանավորված է «Քաղաքական մասնակցություն» ենթաինդեքսի ցուցանիշի վատթարացմամբ, որը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 2.7 տոկոսային կետով: «Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ» ենթաինդեքսը ևս նպաստել է անկման խորացմանը:
- Քաղաքական մասնակցության մասով գենդերային անհավասարության հաղթահարման գործընթացի վրա հատկապես բացասաբար է ազդել կառավարությունում կանանց ներգրավվածության զրոյական մակարդակը:
- Տնտեսական մասնակցության և հնարավորությունների մասով ենթաինդեքսի վրա հիմնականում բացասաբար է ազդել ինչպես

աշխատուժում կանանց և տղամարդկանց ներգրավվածության անհավասարության, այնպես էլ ղեկավար պաշտոններում վերջիններիս զբաղվածության անհավասարության խորացումը:

- Հայաստանում (հասարակության որոշ շերտերում) շարունակում է նկատվել նորածնի սեռով պայմանավորված խտրական վերաբերմունք, որը մտահոգվելու առիթ պետք է հանդիսանա հատկապես առողջապահական ոլորտը համակարգող պետական մարմինների համար՝ ճիշտ քաղաքականությունների մշակման և իրագործման միջոցով վերոհիշյալ խնդրի շրջանակներում հավասարակշռությունը վերականգնելու համար:
- 2020-ին Հայաստանը Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային վարկանիշային աղյուսակում 2019-ի համեմատ հետ է ընկել 1 հորիզոնականով և այժմ զբաղեցնում է նախավերջին՝ 25-րդ հորիզոնականը:
- Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) բոլոր պետությունները ՀԳԱ ինդեքսով և աշխարհում զբաղեցրած իրենց դիրքով առաջ են Հայաստանից:
- 2020 թվականի ՀԳԱ ինդեքսի արդյունքներով Հայաստանը միջանկյալ դիրք է զբաղեցնում հարևան երկրների շարքում՝ նկատելիորեն հետ մնալով Վրաստանից և փոքր-ինչ՝ Ադրբեջանից:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*